ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև), հունիսի 5-ից 7-ը, 2023 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ)

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի միջազգային համաժողովի 111-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի ԺՆևում անցկացնում է տարեկան համաժողով, որին մասնակցում են ԱՄԿ 187 անդամ երկրների կառավարությունների և սոցիալական գործընկերների կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում զուգահեռաբար իրենց աշխատանքներն են սկսում ԱՄԿ տարբեր հանձնաժողովներ, ընթանում են լիագումար նիստեր, անցկացվում են թեմատիկ քննարկումներ: Հանձնաժողովներում, ի թիվս այլ հարցերի, քննարկվում են նաև ԱՄԿ անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանն առնչվող հարցեր՝ վավերացված կոնվենցիաների շրջանակներում ազգային զեկույցների չներկայացման, կոնվենցիաների դրույթների լուրջ խախտումների հետ կապված:

   Նստաշրջանի ընթացքում քննարկվել են ԱՄԿ տարբեր անդամ-պետություններում աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, սոցիալական արդարության զարգացման ապահովմանը, աշկերտության վերաբերյալ չափորոշիչների սահմանմանը, էկոլոգիապես կայուն տնտեսությունների և հասարակությունների անցման հնարավորություններին առնչվող մի շարք հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ղեկավարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի կողմից: Պատվիրակության կազմում են եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Ս.թ. հունիսի 6-ին ԱՄԿ համաժողովի 111-րդ նստաշրջանի լիագումար նիստի ընթացքում հանդես եմ եկել ելույթով: Ելույթում խոսելով աշխատանքի և զբաղվածության ոլորտում ՀՀ որդեգրած քաղաքականության և այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին՝ նշել եմ, որ Հայաստանի Հանրապետությունը, հավատարիմ լինելով իր որդեգրած արժեքներին, շարունակում է անհրաժեշտ ջանքեր և ռեսուրսներ ներդնել՝ անհրաժեշտ բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Այս համատեքստում ընդգծել եմ ՀՀ զբաղվածության ռազմավարության մշակման, «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի իրականացման, «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ու այլ ծրագրերի իրագործման կարևորությունը:
Միաժամանակ, ելույթի ընթացքում բարձր եմ գնահատել Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը և շեշտել, որ կազմակերպությունը եղել և շարունակում է մնալ Հայաստանի վստահելի գործընկերը հատկապես սոցիալական արդարության ամրապնդման, աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման, սոցիալական երկխոսության զարգացման գործում:

ԱՄԿ համաժողովի 111-րդ նստաշրջանին մասնակցության շրջանակներում հանդիպում եմ ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) գրասենյակի գլխավոր տնօրեն Գիլբերտ Հունգբոյի հետ: Քննարկվել են աշխատանքի և զբաղվածության ոլորտում համագործակցության ընթացքին ու նախատեսվող ծրագրերին առնչվող մի շարք հարցեր: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել ոլորտային առաջնահերթություններին, ՀՀ կողմից իրականացվող բարեփոխումներին, ինչպես նաև Հայաստանում աշխատանքային վեճերի կարգավորման արտադատական և գործազրկության ապահովագրության համակարգերի ներդրման հնարավորություններին: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ԱՄԿ ղեկավար կազմի մասնակցությամբ՝ Հայաստանում 2023 թ. նախատեսվող համաժողովի կազմակերպման մանրամասները, որը նպատակ ունի ուսումնասիրել գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում աշխատանքի և զբաղվածության ոլորտում առկա մարտահրավերներն ու հնարավորությունները: Ընդգծվել է համաժողովի կարևորությունը, այն է՝ երիտասարդների համար արժանապատիվ, ներառական և կայուն

աշխատանքային հնարավորությունների ստեղծումը, սոցիալական արդարության երաշխավորումն ու ոլորտային վերջին միտումների ու նորարարությունների ներկայացումը: Դիտարկվել է նաև ԱՄԿ աջակցության հնարավորությունը՝ գործազրկության ապահովագրության, աշխատաշուկայի խթանման և ծերացման կանխարգելման քաղաքականությունների մշակման գործընթացներում, ինչպես նաև տարեցների ակտիվ ծերացմանն ու կանանց տնտեսական ակտիվացմանն ուղղված ծրագրերում:

Հանդիպում եմ ունեցել նաև Իրանի Իսլամական Հանրապետության կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Սեյեդ Սոուլաթ Մորթազավիի հետ:Հանդիպման ընթացքում քննարկվել են աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության ընդլայնմանը, այդ թվում՝ փորձի փոխանակմանը, վերապատրաստումների իրականացմանը, ինչպես նաև նախատեսվող հուշագրերի կնքման ժամկետներին, գործողությունների պլանին առնչվող հարցեր: Երկուստեք ընդգծվել է ոլորտային մի շարք հարցերի շուրջ արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունների կարևորությունը՝ Սեյեդ Սոուլաթ Մորթազավիի՝ փետրվարին Հայաստան կատարած այցի ընթացքում: Այս համատեքստում երկուստեք վերահաստատվել է պատրաստակամությունը՝ քննարկված հարցերի ուղղությամբ շարունակել իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ: Դիտարկվել է նաև հայկական կողմի՝ Թեհրան այցելության կազմակերպման հնարավորությունը՝ Իրանի Իսլամական Հանրապետության սոցիալական բարեկեցության կազմակերպության կենտրոնների աշխատանքին ծանոթանալու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նստաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցությամբ փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 30.05.2023թ-ի 578-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀՆ նախարար՝ Նարեկ Մկրտչյան

ՀՀ ԱՍՀՆ նախարարի տեղակալ՝ Ռուբեն Սարգսյան

ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ՝ Էլեն Մանասերյան

4. Գործուղման վայրը-***Շվեյցարիա՝ Ժնև***

5. Գործուղման ժամկետները ***05.06.2023թ-07.06.2023թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Մկրտչյան Նարեկ***	***Ռուբեն Սարգսյան***	***Էլեն Մանասերյան***	***Ընդամենը (հազ. դրամ)***
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը **(էկոնոմ դաս,** բիզնես դաս)	254,560	254,560	254,560	**763,680**
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը	12,728	12,728	12,728	**38,184**

	(դրամ)				
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	179	179	179	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	41,512	41,512	41,512	-
	Օրերի քանակը	2	2	2	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***83,024***	***83,024***	***83,024***	**249,072**
Գիշերա-վարձի լրացուցիչ հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	***179***	***179***	***179***	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	***0***	***27,650.5***	***27,650.5***	-
	Օրերի քանակը	***2***	***2***	***2***	
	Ընդամենը հաշվարկվել է (դրամ)	***0***	***55301***	***55301***	**110,602**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	141	141	141	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,499.32	54,499.32	54,499.32	-
	Օրերի քանակը	3	3	3	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***163,498***	***163,498***	***163,498***	**490,494**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-	-	-
	Այլ ծախսեր Ավստրիայի դեսպանատուն դիմելու սպասարկման վճար	-	-	-	-
	Ռոսգոսստրախ Արմենիա ապահովագրության վճար	-	-	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)					**1,652,032.000**

****օրապահիկի և գիշերավարձի կանխավճարի հաշվարկի համար հիմք է ընդունվել << կենտրոնական բանկի «31» «մայիսի» 2023 թվականի 1 դոլարին համարժեք 386.52 << դրամի չափը***
****գիշերավարձի լրացուցիչ հաշվարկի համար հիմք է ընդունվել << կենտրոնական բանկի «12» «մայիսի» 2023 թվականի 1 դոլարին համարժեք 386.18 << դրամի չափը***

6/12/2023

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

12.06.2023թ.